№ 142 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԻԼԻՍԻ 3 — 1903 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԻԼԻՍԻ 3 № 142

ԵՐԵՍՈՒՆՄԷՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ»
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յայտնում եմ խորին շնորհակալութիւնս այն հաստատութիւններին և մասնաւոր անձանց, որոնք չտապել էին հեռագրներով և նամակներով իրանց ցաւակցութիւնը յայտնել իմ անմոռանալի ամուսին

ԹԱԳՈՒՀՈՒ

անակնկալ և վաղահաս մահվան առթիւ, օգտվելով դրանով իմ ծանր վիշտը։

Եկատերինոդար. Ե. ԱՒԵՏԵԱՆ

Գորի քաղաքում յունիսի 29-ին, առաւօտեան ժամը 11-ին, ծանր հիւանդութիւնից վաղաժամ մեռաւ բժիշկ

ԳԷՈՐԳ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՏԱՏԵԱՆ

որի մասին ամենադառն վշտով հանգուցեալի հայրը, մայրը և եղբայրը յայտնում են ազգականներին, ընկերներին և ծանօթներին։ Թաղարկաւորութիւնը հինգշաբթի, յուլիսի 3-ին, առաւօտեան 10 ժամին Գորի քաղաքում՝ իր բնակարանից դէպի ս. Ստեփաննոս քարաշէն եկեղեցին։ 2—3

ՊՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանական ընտրութիւնները և Ռուսաստանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հանքագործների ժողովի նիստերը. Նամակներ Ախալքալաքից. Նոր-Նախիջևանից. Մեծ-Ղարաքիլիսայից. Ալէքսանդրոպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գալի հիւանդութիւնը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ճամբարդիոդական ակնարկներ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Գերմանական պատգամաւորների ընտրութիւնները բոլորովին անսպասելի էին կառավարչական շրջանների համար։ Եւ որ աւելի ընտրոյ է, այդ այն է, որ ընտրութիւնները իրանց ներկայ հեռանքներով մասամբ պարտական են կառավարչական շրջանների բռնած և դատնած տնտեսական քաղաքականութեան։ Եւ ահա ինչպէս։

Ինչպէս յայտնի է, Գերմանիան դիտաւորութիւն ունի իր առևտրական դաշնագիրները փոխել այնպէս, որ Գերմանիա ներմուծվող հացը և ուրիշ հում նիւթեր ենթարկվին աւելի մեծ մաքսերի, քան եղել է մինչև այժմ։ Այդ դիտաւորութեանը շատ համակրում է կալուածատէրերի դասակարգը, որ յայտնի է ազդար անունով, իսկ ազգաբնակութեան մեծամասնութիւնը ընդհակառակը նայում է այդ դիտաւորութեան վրա, իբրև մի վտանգաւոր ծրագրի վրա, որ միայն կարող է ջնասել սպառողների մեծամասնութեան, որոնց թւումն են և աշխատաւոր դասի միլիոնաւոր գնդերը։

Ռուսաստանի համար շատ աննպաստ էր գերմանական կառավարութեան բռնած գիրքը, որովհետև Ռուսաստանը մեծ քանակութեամբ հաց և ուրիշ երկրագործական հում նիւթեր է ներմուծում Գերմանիա։ Ներկայ ընտրութիւնները, որոնցով գերմանական ազգաբնակութեան կողմից մի մեծ դատապարտութիւն է յայտնված դերմանական կառավարութեանը նրա անտեսական քաղաքականութեան վերաբերութեամբ, կը հեշտացնեն Ռուսաստանի համար պաշտպանել իր շահերը նոր առևտրական դաշնագիր կնքելու ժամանակ։

Գերմանական ժողովրդական մասսան, հակառակելով մաքսերի բարձրացնելուն սպառման անհրաժեշտ առարկաների վրա, աչքի առաջ ունի էժանացնել աշխատող մարդու տարեկան ծախքերը և այդպիսով հնարաւորութիւն տալ նրան մրցութեան մէջ ուժեղ հանդիսանալ իբրև կուլտուրական տարր իր բարեկեցիկ կեանքով և կուլտուրական առանձնայատկութիւններով։ Այդ մասսան, իր տաղանդաւոր ղեկավարների բերանով, աշխատում է ապացուցանել, որ եթէ Գերմանիան մի փոքր ինչ օգուտ կունենայ ուժեղացնելով հողային կալուածքների եկամուտները, նա աւելի ևս մեծ օգուտ կունենայ, երբ կուժեղացնէ աշխատողների տնտեսական դրութիւնը։

Տնտեսական հողի վրա ծնված պատգամաւորութեան ընտրութիւնների ներկայ կազմը անկասկած ազդեցութիւն կը սկսէ գործել և պետական գործունէութեան ուրիշ ասպարէզներում։ Գերմանական կառավարութիւնը անշուշտ չէր նախատեսնում այդպիսի հետևանքներ ընտրութիւններից, որոնք չեն համապատասխանում նրա թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութեան ծրագիրներին։

Ռուսաստանի համար որոշ կէտերում, այն է առևտրական դաշնագրի և մաքսային խնդիրներում այդ ընտրութիւնները նպաստաւոր են։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

Երկուշաբթի, յուլիսի 1-ին բացվեց Զանգեզուրի հանքագործների ժողովը Թիֆլիսում։ Նիստերը տեղի կունենան Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում։ Ներկայ են եօթ հանքագործ, պաշտօնական անձինք և ներկայացուցիչներ, ընդամենը 16 անձ։ Ժողովի նախագահն է Շեվաչկին։

Առաջին նիստը, որ տեղի ունեցաւ բացման օրը, առաւօտեան 10½ ժամին, ունէր նախապատրաստական բնաւորութիւն։ Նախագահ լեռնային ինժիներ Շեվաչկին, բանալով ժողովը, խօսեց մի ամփոփ ճառ, որի մէջ յայտնեց ժողովի նպատակը։ Մինչև այժմ, ասաց նա, Զանգեզուրի հանքագործները առանձին առանձին էին գործում և այդ պատճառով քիչ արդիւնք էին տալիս և անկարող էին իրանց շահերը պաշտպանել և առաջ տանել։ Նախագահը առաջարկեց ուղարկել չնորհակալական հեռագիր երկրագործութեան մինիստրին։ Որոշվեց ունենալ օրական երկու նիստ՝ առաւօտները և երեկոները։

Երեքշաբթի, յուլիսի 2-ին կայացաւ առաւօտեան նիստը, որ սկսվեց ժամի 8-ին և շարունակվեց մինչև ժամի 1-ը կէսօրից յետոյ։ Քննվեցին երկու հարցեր, որոնցից մէկը վերաբերում էր ոչ-հանքագործների ձայնաւորութեան հարցին, իսկ երկրորդը հանքագործների ձայների թիւին։

Ժողովը, քննելով առաջին հարցը, եկաւ այն եզրակացութեան, որ պաշտօնական անձինք, որոնք մասնակցում են ժողովի նիստերին, ունեն ոչ միայն խորհրդակցական, այլ և վճռող—քուէարկող ձայն։ Երկրորդ հարցի վերաբերութեամբ առաջարկվեցին երկու ծրագիրներ, որոնցից ընդունվեց նախագահ Շեվաչկինի մշակածը։ Այդ ծրագրով թէև խոշոր հանքագործները ունեն աւելի ձայն, քան փոքր հանքագործները, բայց ձայների թիւը աւելանում է ոչ հասարակ բազմապատկութեամբ, այլ աւելի սահմանափակ կերպով, որպէս զի փոքր արդիւնագործողների ձայները չը վնասվեն և չը խեղդվեն։ Օրինակ 1000 պուդ պղինձ արդիւնաբերողը ունի մի ձայն, իսկ 25,000 պուդ արդիւնաբերողը ոչ թէ 25 ձայն, այլ միայն հինգ։ Ձայների համար կազմված է առանձին աղիւսակ։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Յունիսի 22-ին

Բացակայ լինելու պատճառով չը կարողացայ իր ժամանակին հաղորդել կաթոլիկ եպիսկոպոսի մեր գաւառը այցելելու մասին։ Աւելորդ չեմ համարում գէթ հիմա համառօտ տեղեկութիւն տալ այդ այցելութեան մասին։

Բարոն ֆոն Բոսլ այս ամսի սկզբներին այցելել է գաւառիս բոլոր 11 հայ-կաթոլիկ գիւղերը, որոնք Կովկաս գաղթելուց յետոյ, 73 տարի առաջ, Թոքաթի պատրուակով գալիս են այստեղ սիրոյ արկածների համար... Մեր բազուեցիները այստեղ էլ յայտնի հռչակ ունեն։ Ռուսիայի բուրժուայի, ում գիտէ ինչ թանգ, արիւնոտ արժէքով դիզված ոսկիները այստեղ են հաչում ամբերիստ, ոչինչ չը հասկացող բժիշկների և կոկոտների շնորհիւ...

Ցանկանում էք, ինչպէս սովորութիւն է կուլտուրական—մոդերն մարդկանց համար, մի յիշատակ վերցնել կամ մի նկարով պօստ-կարտ գրել ձեր ընկերներին, մտնում էք մի գրավաճառի խանութ. և ահա ձեր աչքը ծակում են ամեն կողմից Մաքսիմ Գորկու նկարով պատկերները, դեռ դրանցից չազատված առաջարկում են ձեզ նրա գրքերը. մարդ ակամայ «օֆ» է քաշում սրտի խորքից։ Աստուած իմ, այս ինչ կոշմար է,—Ռուսաստանում, ուր լինում ես՝ Մ. Գորկիյ, Գորկիյ։ «На Днѣ», «Мѣщане». կամայ-ակամայ մտածում էք, սա ինչ ֆենոմէն է։ Նա լոզունգ է դառել...

Ընթերցող ամբոխը, առհասարակ ամբոխի նման, սիրում է նորութիւններ,—և Գորկին նորութիւն է նրա համար. ուրիշ կերպ ինչպէս բացատրել այն, որ նրա թատերական պիեսները, որոնք թէ բեմական և թէ ընթերցանութեան կողմից այնքան աջող չեն, այսօր այդ պիեսները ամբողջ աշխարհում աղմուկ են յարուցանում և 100,000 օրինակներով տարածվում...

Մ. Մելիք-Ղարամանեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

I

Եալտա, յունիսի 26-ին

Ծովի կանաչ տարածութիւնը կորելով, մեր շոգենաւը մօտենում է Ղրիմի գեղեցիկ ափերին. ահա հեռուից երևում են Տաւրիկի լեռները ամպերի մէջ ծռաված. ահա Այու-Դաղը (արջի սարը) գլուխը անհուն դարերից ի վեր սուզել է ջրի յատակում։ Գոնտոսեան Միհրդատի փառքն է անցել նրա վրայով, և նա չէ բարձրացրել գլուխը մի անգամ գոնէ ջրից՝ տեսնելու այդ Ճենովացիների, Բախչիսարայի խաների չքեղութիւնն է սաւառնել նրա ժայռէ իրանի վրայով, բայց նա խորասուզված՝ անտարբեր է մնացել մարդկային անցողական, վայրկենական խաղերին...

Գեղեցիկ է Եալտան. հսկայական ժայռէ—լեռան ստորոտում, ծովի փողոցում ափին, ճոխ բուսականութեան մէջ թաղված չքեղ վիլլաներով. ահա ծովափի քարափներին՝ ծիծառի բնի պէս պալատներ, հովանոցներ,—սրանք Լիվադիայի կայսերական ամարանոցներն են։

Նաւը կանգնեց նաւահանգստում. մի խումբ Հին-Նախիջևանի և Թրքահայքի հայեր կամուրջ դրին, բարձրացան նաւը, և ծանր բեռները շալակելով վար իջան... Սրանք նաւահանգստի բանուորներն են,—սկսած Օդէսայից մինչև Կ. Պոլիս, այնտեղից էլ բոլգարական ափերով՝ նորից Օդէսա՝ Սև ծովի բոլոր նաւահանգիստներում բանուորները հայեր են... Ծանր բեռները ուսերին՝ վեր ու վար են անում, ծանր կնճիռները ճակատներին... Այս մասին յետոյ։

Մանում էք քաղաքը. արևելքի և արևմտեան կուլտուրայի խառնուրդը աչքի է ընկնում, բայց վերջինս գերակշիռ է. արևելեան կուլտուրան այստեղ մնացել է՝ ինչպէս մի շռայլութիւն, հարուստների համար պերճանք, ինչպէս մեծ քաղաքներում լաւ ձիերը հարուստ տղամարդկանց համար, շներն ու կատուները՝ կանանց...

Գեղեցիկ, ճաշակաւոր տներ կան, նոյնպիսի խանութներով ամենամօդերն իրերով, հագուստներով լիքը՝ և բոլորը մեծ մասամբ կանանց համար. աչքի է ընկնում մանաւանդ կաֆէ-ռէստորանների, կօնդիտերների, հիւրանոցների մեծ քանակութիւնը. շրջում էք քաղաքում, շուրջդ ամեն ուղղութեամբ գնում են չքեղ հագնված պարոններ և կանայք՝ իրանց անբաժան մոպսիկների հետ, որոնց պարանոցներից երբեմն կապված են լինում փողկապեր (գալստուխ). արագութեամբ սլանում են կառքեր, որոնց կառավարում է քնքոյշ ձեռներով տիկինը. իսկ պարոնը սիգար է ծխում, իսկ բուն կառապանը՝ կառքի ետևում, բարձր բազմած, Օգիրիսի պէս, լուրջ դէմքով, բայց վերին աստիճանի անմիտ և ծիծաղաշարժ. մի բօպէ թւում է, թէ Լեմանի ափերումն էք գտնվում՝ Մոնտրէ կամ Վէվէյ. այդ իլլիւզային հանում է ձեզ ղրիմցի թուրքը՝ լայն շալվարով. հատ, ոսկէ գօտիով, որը արևելքին յատուկ որոշ չարժումներով ձեզ ծաղիկ է առաջարկում,—վարդեր, լիլիաների փարթամ, հարուստ վարդեր։

Թուրքից յետոյ կամաց-կամաց համոզվում էք, որ գտնվում էք ուրիշ իրականութեան մէջ. օրինակ, մտնում էք մի կաֆէ-ռէստորան, մի փոքր ուտում, մի փոքր խմում, բայց երբ հաշիւ էք տալիս, տեսնում էք, որ լաւ թանվեցաք. նկատելի փաստ է այս և զարմանալի, որ Ռուսաստանում այս հիւրանոցային—ռէստորանային կեանքը չատ և չատ թանգ է, չատ աւելի թանգ, քան արտասահմանեան մեծ քաղաքներում և կուրորտներում, ուր բնականապէս աւելի թանգ պիտի լինի, որովհետև թէ աշխատող ձեռքն է այնտեղ թանգ և թէ անունդի մթերքները, իսկ Ռուսաստանում, ուր և աշխատող ձեռքն է էժան, և անունդը՝ բայց ընդհակառակն է երևում. պարզ է, որ սա մի արուեստական թանգութիւն է, և նոր, դեռ չը նստած կեանքի հետևանք...

Եալտան իր գեղեցիկ տեղադրութեամբ, ծովային—հարաւային կլիմայով համարվում է թոքախտաւորների համար լաւ կուրորտ, ուր Ռուսաստանի ամեն ծայրերից ուսեորները գալիս են՝ որը բժշկվելու, որը հանգստանալու, որը զուարճանալու. քիչ չեն և մեծ քաղաքի սալօնների բնակիչները, որոնք «ազնիւ, բանաստեղծական հիւանդութիւն» համարված թոքախտի պատրուակով գալիս են այստեղ սիրոյ արկածների համար... Մեր բազուեցիները այստեղ էլ յայտնի հռչակ ունեն. Ռուսիայի բուրժուայի, ում գիտէ ինչ թանգ, արիւնոտ արժէքով դիզված ոսկիները այստեղ են հաչում ամբերիստ, ոչինչ չը հասկացող բժիշկների և կոկոտների շնորհիւ...

Ցանկանում էք, ինչպէս սովորութիւն է կուլտուրական—մոդերն մարդկանց համար, մի յիշատակ վերցնել կամ մի նկարով պօստ-կարտ գրել ձեր ընկերներին, մտնում էք մի գրավաճառի խանութ. և ահա ձեր աչքը ծակում են ամեն կողմից Մաքսիմ Գորկու նկարով պատկերները, դեռ դրանցից չազատված առաջարկում են ձեզ նրա գրքերը. մարդ ակամայ «օֆ» է քաշում սրտի խորքից։ Աստուած իմ, այս ինչ կոշմար է,—Ռուսաստանում, ուր լինում ես՝ Մ. Գորկիյ, Գորկիյ։ «На Днѣ», «Мѣщане». կամայ-ակամայ մտածում էք, սա ինչ ֆենոմէն է։ Նա լոզունգ է դառել...

Ընթերցող ամբոխը, առհասարակ ամբոխի նման, սիրում է նորութիւններ,—և Գորկին նորութիւն է նրա համար. ուրիշ կերպ ինչպէս բացատրել այն, որ նրա թատերական պիեսները, որոնք թէ բեմական և թէ ընթերցանութեան կողմից այնքան աջող չեն, այսօր այդ պիեսները ամբողջ աշխարհում աղմուկ են յարուցանում և 100,000 օրինակներով տարածվում...

Մ. Մելիք-Ղարամանեան

տարվայ ընթացքում, կաթոլիկ եպիսկոպոս չէին տեսել իրանց բնակավայրերում. Այսպիսով աղքատ, յետ ընկած, կորած Բավրան ու Խուլգուման, մի քանի տանից բաղկացած Վարդավը արժանացան եպիսկոպոսի այցելութեան։

Եպիսկոպոսը մի քանի գիւղերում գոհ է մնացել իրան ցոյց տուած ընդունելութիւնից, քահանաներից և եկեղեցիների դրութիւնից, իսկ մնացածներում ոչ։ Կարտիկամ, Բավրա և Խուլգումա թրքախօս գիւղերում զարմանք և դժգոհութիւն է յայտնել, որ հայ-կաթոլիկները թիւրքերէն են խօսում, և պատուիրել է, որ աշխատեն սովորել և խօսել այն լեզուով, որով աղօթում են եկեղեցում, այն է՝ իրանց մայրենի հայ լեզուով։ Հ. Հ. Սափարեանի գեղեցիկ քարոզից, որ նա խօսել է Կարտիկամ գիւղի եկեղեցում, գիւղացիները համարեա ոչինչ չեն հասկացել...

Կարտիկամ գիւղում եպիսկոպոսը գիշերել է ուսումնարանում։ Դէպքից օգտվելով՝ հայ-կաթոլիկ երիտասարդ ուսուցիչ պ. Գողոս Դիլանեան մանրամասն պարզել է եպիսկոպոսի առաջ տեղական հայ-կաթոլիկ համայնքի կրօնաբարոյական և եկեղեցական-վարչական կարիքները։ Եպիսկոպոսը յայտնել է, որ շուտով հայ-կաթոլիկները Թիֆլիսում կունենան «Թագակիր Աբբա», որը, թէև կը ստորադրվի Սարատովի լատին եպիսկոպոսին, բայց կունենայ թեմական եպիսկոպոսի բոլոր իրաւունքները՝ բացի քահանայ ձեռնադրելուց և մեռոն օրհնելուց։ Ախալցխայի հայ-կաթոլիկ հոգևոր կառավարութիւնը կը տեղափոխվի Թիֆլիս. հոգևոր կառավարութեան անդամները կը լինեն կրթված հայ-կաթոլիկ հոգևորականներ։ Հէնց հիմա Ախալցխայի հոգևոր կառավարութեան անդամ նշանակված է հ. Դ. Գաղատոսեան։ Բացի դրանից՝ հայ-կաթոլիկները Թիֆլիսում կունենան սեփական եկեղեցի և հոգևոր դպրոց։ Եպիսկոպոսը նոյն իսկ անուանել է այն հաւանական թեկնածուների անունները, որոնցից մէկն ու մէկը պէտք է նշանակվի Անդրկովկասի հայ-կաթոլիկների հոգևոր կառավարիչ։

Բարոն Ֆոն Բոսչ եպիսկոպոսը Ախալցխայում իջել է վրացախօս կաթոլիկների պատրաստած տեղը, թէև հայերն էլ պատրաստութիւն են ունեցել։ Իրանց վրացի «ազգատէր» անուանող այդ հայ-կաթոլիկները մի ազգասիրական մեծ ակտ են կատարել, այն է խնդիր են տուել լատին եպիսկոպոսին, թէ իրանք կամենում են բոլորովին միանալ լատին եկեղեցուն։ Եպիսկոպոսը այդ երեկի քաղաքագէտ «ազգատէրներին» յայտնել է, որ այդ հարցը իր իրաւասութիւնից դուրս է և այդ պատճառով նրանց խնդիրը կը ներկայացնէ Հռոմի պապին։

Ի դէպ. մեր գաւառի շատ բազմամարդ և առաջնակարգ հայ-լուսաւորչական գիւղերը այստեղ գաղթելուց յետոյ, հաւանականօրէն դեռ արժանացած չեն հայ եպիսկոպոսի այցելութեան։ Արիոտակէս եպիսկոպոս Սեդրակեան Թիֆլիսի իր թեմակալութեան ժամանակ մի քանի անգամ այցելել է այս գաւառը, բայց չեմ կարծում, թէ բոլոր գիւղերը այցելած լինի. իսկ հետևեալ թեմակալները երբէք չեն այցելել հայաշատութեամբ կարևոր այս գաւառը։ Ժողովուրդը երկար տարիներ սպասում է ներկայ առաջնորդ Սուրէնեանի շնորհաբեր գալստեանը, յուսալով, որ իրանց առաջնորդը՝ տեղն ու տեղը անմիջապէս ծանօթանալով իր իրաւասութեանը վերաբերվող տեղական կենսական խնդիրների և կարիքների հետ՝ կարգադրութիւններ կանէ կամ վճիռներ կը կայացնէ ոչ թէ ընդհանուր կշռադատութիւններով կամ նոյն իսկ առանց դրանց, ինչպէս, օրինակ, եկեղեցական գումարների հարցում, այլ իրողութեան և իրական փաստերի ու երևոյթների անողոք լոգիկայի հիման վրա։ Փառք Աստուծու, Թիֆլիսը աւելի մօտ է մեզանից, քան Սարատովը, և հաղորդաւոր վերստեր կարելու կարիք չը կայ։

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 5-ին

Մայիսի 30-ին վերջացան մեր թեմական դպրոցի VI-րդ դասարանի քննութիւնները։ Այս տարվայ աւարտողները ընդամենը 10 հոգի են։ Այս թիւը, համեմատած անցեալ շրջանների տուած թիւերի հետ, շատ է. մեզ մօտ առհասարակ աւարտում են 5—7 աշակերտներ. կան տարիներ, երբ աւարտել են 2—4 հոգի կամ երկու դէպք կայ—ոչ մի աւարտող չէ եղել։

Մեր դպրոցը հիմնված է 1881 թ.։ Աւարտողների առաջին շրջանը եղել է 1887 թ.։ Ներկայ շրջանը տասնուհինգերորդն է, եթէ հաշուից դուրս հանենք այն երկու տարին, երբ աւարտողներ չեն եղել։ Այս ժամանակվայ ընթացքում դպրոցն աւարտել են 80 հոգի (մօտ կամ աւելի). ուրեմն իւրաքանչիւր շրջանը միջին թիւով տուել է 5 հոգի։ Այս թիւը, ի հարկէ, քիչ է. քչութիւնը աչքի է ընկնում մանաւանդ, երբ համեմատում ենք Ներսիսեան դպրոցի իւրաքանչիւր տարվայ շրջանաւարտների թիւի հետ։

Այս երևոյթը իր պատճառներն ունի, ի հարկէ։ Մինչդեռ Ներսիսեան դպրոցը աշակերտներ ունի շատ տեղերից՝ Կովկասի բոլոր թեմերից. Թիւրքիայից, Պարսկաստանից,—մեր դպրոցը ուսման կենտրոն է բացառապէս Բեսարաբիայի թեմի համար, գլխաւորապէս Նոր-Նախիջևանի համար, նրա շրջակայ հինգ հայ գիւղերի հետ միասին. Աստրախանի թեմը քիչ աշակերտ է տալիս, իսկ անդրկովկասցիները աչքի ընկնող բացառութիւն են կազմում։

Ուրեմն հասկանալի է, թէ ինչու Նոր-Նախիջևանի դպրոցը շատ աւարտողներ չէ տալիս։ Բացի սրանից կան նաև ուրիշ հանգամանքներ։

Նկատելի է այն երևոյթը, որ հայ ունևոր դասակարգը, իր որդոց չէ յանձնում թեմական դպրոց. «լայեղ» չի անում։ Նրա համար «հայ ուսումնարանը» անպէտք, իրան ոչ մի շահ, ի հարկէ նիւթական, չը բերող մէկ բան է, որի վրա կարիք չը կայ ուշադրութիւն դարձնել. նա մինչև անգամ ծաղրում է, արհամարհում է հայ դպրոցն ու նրա տուած կրթութիւնը։ Այս կողմից մանաւանդ աչքի է ընկնում Նոր-Նախիջևանցու հայեացքը դպրոցի մասին։ Հարցրէք նրան, ինչու իր որդուն չէ տալիս դպրոց։—(Բօշ բան է ի դա սէմինարին. օշտիս ինչ պիտ 'լայ հոն սորվենալէն ետը, տէրտէր. ռազվի (развѣ) իմիս օշտին փոսաթօյ մաշթու զաւակ է)—կը պատասխանէ նա։ Նրա համար վիրաւորանք, նախատինք է, որ իր որդին, իր Սերեսօձան կամ Սենիան դպրոց յաճախէ.—«что скажетъ Марія Алексѣевна?...

Մէկ կէտում կարելի է արդարացնել Նոր-Նախիջևանցու այս վարմունքը։ Նա չէ ուզում, որ իր որդին հոգևորական, ուսուցիչ, հասարակական որ և է գործիչ դառնայ. նրա փափագն է որդուն տեսնել բժիշկ, ինժենէր և այլն դարձած, փողեր վաստակելու ընդունակ. որպէս զի կարողանայ յետ ստանալ այն, ինչ որ ծախսել է նրան ուսում տալու համար։ Եւ նա յանձնում է իր որդկերանց գիմնազիան, ռէալական դպրոց։

Թեմական դպրոցները ամեն տեղ անուշադիր են մնում հարուստներից և գրաւում են միայն գլխաւորապէս աղքատ դասակարգը. մեր դպրոցները չքաւոր տղաների մտաւոր պատսպարաններն են. այդ տեղերն է դիմում ուսումնածարաւ աղքատները։ Բայց շատ քչերն են մնում դպրոցում և աւարտում ուսումը. նիւթական նեղութիւնը տիպում է շատերին թողնել ուսումնարանը առաջին-երկրորդ դասարանից և զբաղվել գործնականով՝ արհեստով, վաճառականութեամբ։

Այս պատճառներովն է մեր դպրոցը քիչ աշակերտ տալիս։

Բայց նշանակութիւնը շատութեան մէջը չէ, այլ որակի հարցն է կարևորը։ Ուզում ենք ասել, թէ ինչ մարդիկ է տուել մեր թեմական դպրոցը։ Այս մասին մի այլ անգամ։

Մ. Վ.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՑԻՑ

—

Յունիսի 30-ին

Սրանից աւելի քան մի ամիս առաջ պ. Ղարաբիլիսեցին այստեղից գրած իր նամակում յայտնել էր, որ մտադրութիւն կայ Ղարաքիլիսում բաց անել դրադարան-ընթերցարան և որ այդ առիթով տեղի է ունեցել բաւական խոշոր նուիրատուութիւններ եղբայրներ Մ. և Օ. Յարութիւնեանների կողմից։

Երիտասարդները մի քանի անգամ հաւաքվեցին, կազմվեց ծրագիր, խմբագրվեց կանոնադրութիւնը և համախօսականը։ Մնում էր միայն ժողովրդին ստորագրելը։ Սակայն մի քանի տուզեր սառը ջուր ածեցին տաք արիւնների գլխին, առարկելով, որ գրադարանը մեզ համար վաղաժամ է, նա մեր ծախսերը կը շատացնի։ Այնու ամենայնիւ յոյս ունենք, որ գործը առաջ գնայ, որովհետև մեր նորընտիր տանուտէրը լինելով որոշ կրթութեան տէր մի երիտասարդ և համակրող գրադարան-ընթերցարանի գաղափարին, գործ կը դնէ իր բոլոր ջանքը և հեղինակութիւնը համոզելու ժողովրդին, որ այդ բանից նրան երբէք վնաս չի գայ և որ գիւղական պաշտօնեաները փոխանակ գինետներում փչանալու, գրադարանից կարող են մտաւոր և բարոյական մնունդ ստանալ։

Պէտք է ասած, որ գրադարանի հարցից ոչ պակաս կարևոր կան և մի քանի հասարակական հարցեր, որոնք կարօտ են շուտափոյթ լուծման։ Նոր տանուտէրի աշխուժութիւնից և միանգամայն եռանդից է կախված ընթացք տալ այդ հարցերին, որոնք մինչև այժմ բոլորովին մոռացութեան էին տրված։

Այդ հարցերի թւում առանձնապէս շեշտում ենք ամառանոց եկողներին յարմարութիւններ տալու խնդիրը։ Անա հինգ տարի է, ինչ որ ամառները շարունակ մեզ մօտ գալիս են բաւականաչափ թիւով մարդիկ, բայց մինչև օրս մենք ոչինչ չենք արել գէթ փոքր ինչ յարմարութիւններ տալու նրանց։ Ամառանոց եկողը մաքուր և զով օդի հետ կարիք է զգում և զուարճութիւնների։ Ունենք մի հասարակական այգի անգամ, որտեղ կարողանային հաւաքվել նրանք, չը կայ նուագածուների խումբ, ներկայացումների և պարահանդէսների համար դահլիճ։ Ստեղծենք յարմարութիւններ և ամառանոց եկողների թիւը անկասկած կարող է կրկնապատկվել, իսկ այդ շատ կարևոր է տնտեսական տեսակէտից։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

—

Յունիսի 29-ին

Գաւառական քաղաքների մէջ վերջին տարիներում Ալէքսանդրօպոլն ևս աչքի է ընկնում իր ունեցած ուսանող-երիտասարդների քանակով։ Կար ժամանակ, որ ուսանողին Ալէքսանդրօպոլում օրը ցերեկով ճրագով էին որոնում, եղածին մատով էին ցոյց տալիս, իսկ ներկայում արդէն ամեն քայլափոխում կը պատահէք թէ տեղացի մեծ մասամբ և թէ օտար ուսանողների։

Տասնեակ տարի առաջ ալէքսանդրօպոլցի հայը, եթէ մտածում էր որդուն տալ կրթութիւն, ուսում, նրա միտքը սաւառնում էր միմիայն կամ Գէորգեան ճեմարանի կամ թէ իրար չափով Ներսիսեան դպրոցի շուրջը. նա մտքումն անգամ, ի հարկէ, չէր անցնի տեսնել որդուն դ օ կ տ ո ւ ր, ինժենէր և այլն, կարծելով թէ այդ կոչումները իրանից մի բանով աւելիների համար են, իսկ երբ յանդգնում էր երևակայել որդուն արդէն աւարտած վերոյիշեալ դպրոցները, պատկերացնում էր նրան կամ վարժապետ, քահանայ կամ վարդապետացու։ Զը նայելով, որ այն ժամանակ ուսման տուողը աւելի միջոցների տէր անհատներ էին, բայց նրանց մտածողութիւնը Ներսիսեան դպրոցի ու Գէորգեան ճեմարանի պատերից այն կողմը չէր անցնում։ Իսկ վերջին տարիներս, երբ մի կողմից փակվեցին մեր ծխական դպրոցները, կրճատվեց թեմականաւարտի գործունէութիւնը, միւս կողմից էլ արդէն տեղացիները վերացրին Ալէքսանդրօպոլի և միւս քաղաքների մէջ եղած չինական պարիսպը և կամաց-կամաց դուրս գալով իրանց տներից, սկսեցին ընտելանալ օտար կեանքին և շփվել այլ տեղերի կեանքի հետ, նոր բացվեց նրանց աչքը, որ բժիշկն էլ, իրաւաբանն էլ, ինժենէրն էլ նոյնպիսի հասարակ մահկանացուներ են, ինչպէս իրանք, միայն թէ նրանք ստացել են որոշ ուղղութեամբ կրթութիւն, իրանք էլ կամաց-կամաց սկսեցին մէջ գցել իրանց որդոցը, տալ ռէալական դպրոց, տալ գիմնազիան։ Մի ժամանակ մեր «ապյանները», որ իրանց որդկերանցը չէին թողնում ոչ թէ մի օրով, այլ նոյն իսկ մի քանի ժամով հեռանալ մի քանի վերստով քաղաքից, այսօր տեսնում ենք, որ նրանք ոչ միայն որդկերանց են ուղարկում թէ մօտիկ և թէ ամենահեռաւոր քաղաքները՝ Ռուսաստանի խորքերը ուսում ստանալու համար, այլ և իրանց աղջիկներին ուղարկում են օտար քաղաք կանոնաւոր գիմնազիական կրթութիւն ստանալու։

Այս բոլորը, ի հարկէ, շատ լաւ է, խօսք չը կայ, որ սա առաջադիմութեան նշան է և ուրախալի երևոյթ, որ այէքսանդրօպոլցի երիտասարդն ու օրիորդը ևս ստանում են կանոնաւոր միջնակարգ, ապա բարձր կրթութիւն, բայց չը պէտք է մոռանալ որ կանոնաւոր կրթութիւն ստանալը չը պէտք է մեզ հեռացնէ մեր մայրենի լեզուի, մեր պատմութեան, գրականութեան լուրջ ուսումնասիրութիւնից։

Մի ժամանակ այէքսանդրօպոլցին տալով որդուն Ներսիսեան դպրոց կամ Գէորգեան ճեմարան, այլ ևս իրան բոլորովին ազատ էր զգում դէպի իր որդին ունեցած պարտականութիւններից, այնտեղ նա և հայոց լեզու էր սովորում և թէ գրականութիւն, իսկ այսօր այս բոլորը ընկնում է ընտանիքի, հօր ու մօր վրա, և լրջամիտ ծնողը չը պէտք է աչքաթող անէ այս։

Եռ առանձնապէս շեշտեցի թէ Ալէքսանդրօպոլը աչքի է ընկնում իր ուսանող-երիտասարդների քանակութեամբ. իսկ հապա որակութեամբ։

Առ այժմ նրանց տուած լաւ գրաւականը յունիսի 27-ի բարեգործական նպատակով տուած ներկայացումն էր, որին, բացի սիրողներից ու դերասան պ. Խաժակից, մասնակցում էր և պ. Ն. Տիգրանեանը՝ իր քաջալր և հնչիւն նուագածութեամբ (դաշնամուրի վրա)։

Խաղացին «Դօքտոր Թաթոս» և «Ժամանակակից Ճարտարութիւնք» վոդեվիլները։ Ներկայացմանը մասնակցում էին պ. Խաժակ, ուսանողներ Ալիազեան, Խաչատրեան, Մանդինեան, Քէչէչեան, պ. Ճանիկեան, օր. Նահապետեան, օր. Զալալեան և տ. Տէր-Խաչատրեան. դէպի ներկայացումը, ի հարկէ, չը պէտք լինել խրստապահանջ, քանի որ սիրողների խաղ էր և այն էլ նոր սկսնակ սիրողների։ Խաղի մէջ աչքի էր ընկնում ուս. Մանդինեան Թաթոսի դերում, թէև չափազանցութիւնների մէջ էր ընկնում, և տ. Տէր-Խաչատրեան ու օր. Զալալեան. վերջինիցս աւելի կարելի էր պահանջել, ի նկատի ունենալով նրա բեմական վարժութիւնները, որպէս Թիֆլիսի սիրողների բեմական անդամ։ Զարմանալի էր, որ սիրողները աւելի աջող տարան իրանց դերը, քան պ. դերասան Խաժակը։ Մեծ ծափահարութեան ու կրկնութեան արժանացաւ պ. Ն. Տիգրանեանի և Ճինանեանի նուագածութիւնները։ Երգեցին trio—պ. Բաբայեան, օր. Վանեցեան և ուս. Տէր-Մարտիրոսեան՝ «Մայր-Արաքսի»։ Ապա տեղի ունեցան հայկական ու եւրոպական պարեր տեղական սազանդարի ու խմբական մուզիկայի նուագածութեան տակ. եկած հասարակութիւնը հեռացաւ ուշ գիշերին, գոհ արտով։

Ներկայացումը սպասածից աջող էր. սա մի փաստ է մեր ուսանողներին, որ եթէ միացած ոյժով ձեռնարկեն որ և է գործի, միշտ կունենան աջողութիւն, իսկ մեր հասարակութիւնը կարօտ է միացած ոյժով աջող գործեր տեսնելու։

Ս. Մնջոյեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից. «Վերջին տեղեկութիւններին նայելով, Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցինի մեկնումը դէպի Թիֆլիս տեղի կունենայ յուլիսի 1—5-ին»։

—

Նոյն լրագրին հեռագրում են Կարսից. «Երէկ, յունիսի 29-ին, 5 ժամին ճաշից յետոյ, սկսեց այրվել այն շինութիւնը, որի մէջ գտնվում էին նահանգապետի, քաղաքային ոստիկանութեան ատեանները և հիւանդանոցը։ Կրակը սկսեց տարածվել կաուրից։ Կաուրի և առաստաղի կէսը վնասվեցին և քանդվեցին։ Հրդեհը աջողվեց հաղթել երեկոյեան ութ ժամին։ Թղթերը և իրերը դուրս տանելու ժամանակ նրանցից մի քանիսը վնասվեցին։ Հրդեհը ծագել էր հացթուխի խանութից, որ գտնվում է ոստիկանատան ստորին յարկում»։

—

Թիֆլիսի բնակչուհի Եկատերինա Խուդաղեան երեքշաբթի, յուլիսի 2-ին, դիմեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան և յայտնեց, որ իր կալուածքում, Բօրչալուի գաւառի Թրիալէթ գաւառամասում, Թաց լեռներ կոչված լեռներից մեծ առատութեամբ բղխում են աղբիւրներ, որոնցից կազմվում է Կարաբուլախ գետակը։ Այդ աղբիւրների ջրերը, որոնք չափազանց մաքուր են և համեղ, կարելի է բերել Թիֆլիս, առանց մեքենայական ոյժի, ջրի բնական հոսանքով, որովհետև այն տեղը, ուր բղխում են աղբիւրները, ծովի մակերևոյթից բարձր է մօտ 4,000 ոտնաչափ և հեռու է Թիֆլիսից ուղիղ գծով 60 վերստ միայն։ Աղբիւրները կարող են մատակարարել Թիֆլիսին օրական մօտ մէկ միլիոն վեդրո ջուր։ Ե. Խուդադեան խնդրում է քաղաքային վարչութիւնից նշանակել մասնաժողով, որ քննէ այդ աղբիւրների ջրերի յատկութիւնն ու քանակութիւնը և եթէ քննութիւնից նպաստաւոր հետևանքներ ստացվեն, ապա համաձայնութիւն կապել իր հետ ջրերից օգտվելու կամ աղբիւրները գնելու մասին։

—

«Օրէնսդրութիւնների ժողովածու» մէջ հրատարակված է պետական խորհրդի բարձրագոյն հաստատված կարծիքը Պետերբուրգի քաղաքային հասարակական ինքնավարութիւնը փո-

փոխութիւնների ենթարկելու վերաբերմամբ։ Նոր օրէնքը հաստատված է 1903 թուականի յունիսի 8-ին։

—

Մեզ ինդրում են տպագրել հետեւեալը. «Սրանից մի քանի օր առաջ անցնելով Ալէքսանդրեան այգու միջով՝ թարմ օդ ծծելու համար նստեցի երկար նստարաններից մինի վրա։ Կարմիր չուխա հագած կինտոն, օգտվելով մենակութիւնից և, մի և նոյն ժամանակ կարծելով ինձ անհասկացող, եկաւ ու նստելով մօտս՝ ուզեց ինձանից լուցկին իր մինչև կէսը լցրած չիբուխը վառելու։ Մի բոպէ չանցած այս գործողութիւնից՝ խորամանկ սրիկան հանեց գրպանից մի խոշոր մատանի և իր չուխով ծածուկ մաքրելուց և աւելի պպզղացնելուց յետոյ՝ ինձ ցոյց տալու համար սկսեց ձեռքին խաղացնել...։ Մեր փորձված սրիկան տեսնելով, որ ուշադրութիւն չեմ դարձնում իր մատանու վրա՝ հարցրեց.—Քանի բուբլով ես գնել մատանիդ...։—Հինգ բուբլով, պատասխանեցի ես։—Եթէ այդ բարակ մատանին այդքանով ես գնել, ուրեմն, սա ինչպէս դրանից աւելի մեծը աւելի թանգ կարժէ. չէ...։ «Եթէ ոսկի է՝ կարժէ», ասացի ու վերցրի նրանից մատանին։ Տեսնելով, որ ոսկի չէ ասացի, թէ կարժէ 10—15 կոպ.։ Նա ծիծաղեց...։ Համոզվելով, որ փողոցողներից էլ, ցանկացայ լաւ ուսումնասիրել նրա այդ ստոր վարմունքը և սկսեցի նրա հետ սակարգութիւն անել, որ և վերջապէս բարիշեցինք 3 ր. 50 կոպ.։ Դիտմամբ հանեցի գրպանիցս պօրտմանէս և սկսեցի մէջը քրքրել թէ չէ, յանկարծ մեր առաջ բուսաւ մի աւելի լաւ հագնված կինտո, և յափշտակված վերցնելով նրա ձեռքից մատանին, սկսեց ինքը սակարգութիւն անել...։ Երկու ընկերները շուտով համաձայնութիւն կայացրին իրանց մէջ ութ բուբլով... իսկ ես (իրանց ցանկութեան համեմատ) փոխանակ աւելացնելու դինը ասացի, որ այդպիսի խաղերը թող իրանց պէս յիմարների վրա բանեցնեն, և որ ես, ոչ թէ 3 ր. 50 կոպ. այլ 10 կոպ. էլ չէի տար»։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան մէջ մօտ ժամանակներումս վերջնականապէս կը վճռվի էքսպրէսս գնացքների թիւն աւելացնելու հարցը ռուսական բոլոր երկաթուղային գծերի վրա։

—

Թիֆլիսից դէպի ս. Դաւթի տարի գլուխը ֆունիկուլեր շինելու նպատակով նոր կազմակերպվող ակցիոնէրական ընկերութիւնը մօտ օրերումս դիմեց Թիֆլիսի ձիաքարշի բէլգիական ընկերութեան՝ խնդրելով 45,000 բուբլի ներկայացնել քաղաքային վարչութեան, որպէս գրաւական ֆունիկուլերի շինութեան արտօնութիւնը չը կորցնելու համար, որովհետև այդ արտօնութեան ժամանակամիջոցը լրանալու մօտ է։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Շուլավէրի երիտասարդները Շուլավէրում մայիսի 4-ին ներկայացրին «Ասլա»-Բալասի», որ բաւական աջող անցաւ։ Այդ ներկայացման մուտքը յատկացրված էր Շուլավէրի նորաբաց հիւանդանոցի օգտին։ Մուտք եղաւ 46 ր. 70 կ., իսկ ծախս 25 բուբլի. մնացած 21 ր. 70 կոպ. յանձնվեց հիւանդանոցին։ Շնորհիւ պ. Արամեանի նուիրած 500 բուբլու և այդ փոքրիկ գումարի, տեղիս ազգաբնակութիւնը, առանց ազգի և կրօնի խտրութեան, ձրի դեղեր է ստանում վերոյիշեալ հիւանդանոցից»։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են յունիսի 22-ից. «Այսօր երրորդ օրն է, ինչ Թելաւում չարունակ անձրև է տեղում։ Երէկ և այսօր այնպիսի հեղեղ է թափվում, որ չեն մտաբերում 40 տարեկան ծերունիներ։ Բայց թէ ինչ աղէտներ առաջացրեց և ինչ է սպասվում առաջիկայում —կարելի է եզրակացնել հետեւեալից։—Փողոցի առուակը, որ Թելաւի երկու մասերը իրար հետ միացնում է մի փայտաշէն կամուրջով, այնպէս վարարված է, որ ջուրը անցնելով այդ կամուրջով, կազմել է մի հսկայական ջրվէժ, փերից դուրս գալով հեղեղում է շրջակայքը, կործանելով խանութներ, այգիներ, արտեր, քշելով ու աւազի տակ թաղելով ամբողջ ազգաբնակութեան հարստութիւնը։ Ջուրը թափվելով շինութիւնների ներքնայարկը, նկուղները, ոչնչացնում է ամեն ինչ և ոչ ոք չէ համարձակվում առաջն առներ։ Քանդվեցին արներ, խանութներ, բայց դեռ ևս յայտնի չէ աղէտի մանրամասնութիւնը, որովհետև տեղացող անձրևի պատճառով ոչ ոք միջոց չունի ծանուցելու անհագին վնասի քանակութիւնը։ Դեռ ևս յայտնի է, որ քանդվել են մի քանի տներ և խանութներ։ Ամբողջ երկու օր Թելաւի երկու թաղերի հաղորդակցութիւնը շարունակվում էր սայլերով։ Այդ աղէտի առաջի օրը—21-ին ոչ քաղաքային վարչութիւնը և ոչ ոստիկանութիւնը ուշադրութիւն չը դարձրին և զօրքը կանչվեցաւ այսօր—22-ին, երբ արդէն ուշ էր։ Թէև երկու տարի է, ինչ այդ առուակի երկարութեամբ մի քարուկրեայ պատուար չինվեցաւ, բայց այդ պատը այնքան սխմել է ջրի ընթացքն ու հոսանքը, որ ջուրը այլ ևս չը տեղաւորվելով դուրս է գալիս ափերից և անցնում է նոյն իսկ կամուրջով։ Իսկ Թելաւի շրջակայքը իր հարուստ այգիներով, արտերով և գիւղերով ամբողջապէս ջրի մէջ է։ Այգիների և արտերի փոխարէն դիզված են քարակոյտեր։ Գիւղերի մասին դեռ ևս այսքան է յայտնի, որ տարել է Ուղեղի 3 դեռատին այգի, այգիները և արտերը փոխարկվել է հեղեղատի, քանդվել են ջրաղացներ, խեղդվել են մարդիկ, անասուններ և ընտանի թռչուններ. Ղուարել գիւղում կայծակը սպանել է չորս մարդ և չորսին վիրաւորել։ Թիֆլիսի և Թելաւի մէջ երեք օր է հաղորդակցութիւնը ընդհատված է։ Թիֆլիսից դուրս եկած օմնիբուսները իրանց ճանապարհորդներով 3 օր է քաղցած նստած են Թեթրիս-Ծղալի կայարանում։ Ճանապարհները քարուքանդ են եղած և անկարելի է անցնել կառատի Թուդջ հեղեղատով։ Այսօր ոչ մի տեղից պօստը չէ ստացվել և Թիֆլիս գնացող դիլիջանները յետ վերադարձան։ Կատաբեալ աշուն է իր ցուրտ եղանակով, անձրևային և ամպոտ երկնքով»։

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Զարմանալի դրժբաղդ քաղաք է Ղզլարը։ Համարեա տարի չէ անցնում, որ Ղզլարի այգիները չը վնասվեն որ և է պատճառով։ Անցեալ տարի ցուրտը փչացրեց այգիները և ժողովուրդը, մանաւանդ հասարակ այգեպանները մնացին ողորմելի։ Այս տարի էլ սպառնում է գեռը, որ պատուելով իր հին տեղից՝ արդէն մի քանի այգիներ մտել է։ Տեսնենք վերջը ինչ կը լինի. աշխատում են հեղեղի առաջն առներ»։

—

ՏԱՎՇԱՆ-ՂՇԼԱՂ գիւղից (Ալէքսանդրապոլի գաւառ) մեզ գրում են. «Այս տարի ցանկանում են արական երկդասեան դպրոցին կից բաց անել մի բաժանմունք իգական սեռի համար։ Ուստի յունիսի 15-ին ժողով էին կանչված 15 գիւղերից մարդիկ 4-րդ մասի պ. պրիստաւի կարգադրութեամբ։ Ժողովին ներկայ էին և մի քանի ուսուցիչներ։ Տեղական դպրոցի աւագ ուսուցիչ պ. Հայրապետ Ղազարեանց արդէն պատրաստել էր այն պայմանները, որոնք հարկաւոր էին բաժանմունքի բացման համար։ Ժողովրդից պահանջվում էր տալ ծառայ և վառելիք, իսկ ուսուցիչների վարձը խնդրել գանձարանից. ուրեմն ժողովրդից պահանջվում էր 100 բուբլի։ Երբ առաջարկվեց այս պայմանը, ժողովուրդը միաբերան կոչեց. «չենք ուզում»... Մէկն ասում էր. «հա, աղէքը շատ թեփից հանեցիք, մնաց աղջիկները։ Միւսը ասում էր. «Զանմ վովէ խելոել, որ իրան աղջիկը ղրգէ 5—6 վերստ կարթլու։ Երրորդը՝ «աղջկան ինչ կը վայելէ կարդալ»։ Եւ այսպիսի պատասխաններով հեռացան... Պայմանը ընդունեցին միայն Տավշանղշլաղ գիւղացիք, որոնք և ստորագրեցին»։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Այսօր, յունիսի 21-ին, ճաշից յետոյ, ժամը 4½-ին, Բինիձորի անտառի վրա, երկնքում սկսվեցին ժողովվել սև սև ամպերը, որոնք և մթնացրին անտառը առանց որոտալու. մութը կամաց-կամաց սկսեց մօտենալ գիւղին, ժամկոչները շաչալով զանգահարում էին զանգակները, գիւղում մարդիկ չփոթվել էին. անմիջապէս խաւարին հետևեց աստիկ քամի ու սարսափելի կարկտախառն հեղեղ ու մի քանի բոպէում բոլորովին ոչնչացրեց այգիները ու նրանց մօտի արտերը։ Հունձը չորս օր էր սկսվել էր. ազատ մնացին գիւղից շատ ցած մի քանի այգի և հացաբոյսերի մեծ մասը։ Փողոցներում մարդիկ անց ու դարձ չէին կարողանում անել. փչրվեցին պատուհանների ապակիները, իսկ հեղեղից յետոյ երեխաները այգիներից ժողովում էին սպանված նապաստակներին։ Փողոցներում այլ ևս ուրախ դէմքեր չեն երևում։ Շուլաւէրը տարին տալիս է մօտ 80,0000 վեդրօ գինի. այս տարի բերքը սովորականից երեք անգամ աւել էր. սրանից կարելի է եզրակացնել մեր գիւղի վնասի մեծութիւնը, եթէ նոյն իսկ վեդրօն հաշուենք 1 ր. 50 կոպէկ»։

—

ՎԵՐԻՆ-ԱԶԱ գիւղից (Երևանի նահանգ) մեզ գրում են. «Մի ամիս առաջ գիւղերում չների մէջ տարածվեց մի տեսակ վարակիչ հիւանդութիւն, այնպէս, որ կարճ միջոցում շատ այգէտէրեր զրկվեցին իրանց այգիների միակ հաւատարիմ պահապաններից։ Ներկայումս երեխաների մէջ տարածվել է տիֆը-փորհարինք հիւանդութիւնը։ Խեղճ, անմեղ երեխաները տանջվում են այդ և այդպիսի շատ հիւանդութիւնների ճանկերումն։ Տանջվում են նաև հասակաւորները, բայց ոչ ոք չի մտածում բժշկական օգնութեան մասին։ Ցանկալի էր, որ մեր գիւղացիք հրաւիրէին մի բժիշկ։ Մեր կարծիքով, այդքան էլ ծանր չէր լինի մեր երկու հարևան հայաբնակ գիւղերի համար, (Ազայի և Դէրի), որոնք մօտաւորապէս 300 տուն բնակիչ են կազմում»։

—

ԱՐԳԻՆԱՑԻՑ մեզ գրում են. «Շիրակում հայ և Թուրք գիւղացիները օգտվում են միմիայն ցանքերից. ոչ մէկ հայ գիւղ չունի ամենահասարակ բան—բանջարանոց, որից օգտվէր ինքը. գիւղացին դեռ չէ հասկանում օգտվել իր հողից, գոնէ օրինակ վերցնէր հարևան ռուսներից։ Ուսման կողմից, ինչ ասել կուզէ, որ առաջադիմում ենք։ Մի գաւառ ունի միայն Ղզլչախչխում մի փոքրիկ ուսումնարան (բացի ռուս գիւղերից, որոնցից իւրաքանչիւրը ունի ուսումնարան), որտեղ միայն երեք հայ գիւղի երեխաների հազիւ բաւականութիւն տայ»։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Մեր նորակառոյց մանաւոր բուժարանը, իր լաւ կազմակերպութեան շնորհիւ, եռանդուն գործում է։ Թէ որքան անհրաժեշտ է Շուլավէրում սենեալ բուժարան, այդ երևում է այն պերճախօս փաստից, որ մայիսի 5-ից մինչև վեց շաբաթվայ ընթացքում, յաճախող հիւանդների թիւը եղել է 1347 հոգի, որոնք և բոլորը ձրիապէս ստացել են բժշկական խորհուրդներ և դեղեր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

—

Պետերբուրգի լրագիրներում պապի հիւանդութեան առիթով տպված են հետեւեալ հեռագրական տեղեկութիւնները։

«Ինտրիգները մեծ զգուշութեամբ են տարվում կօնկլավի շուրջը։ Երևի դա բացատրվում է պապի առողջական դրութեան լաւանալով կամ այն երկիւղով, որ մէկը նրանցից կարող է բաց անել գաղտնիքը և դրա հետևանքը կը լինի այն կարդինալի հեռացումը ընտրողների թւից, որը կը մեղադրվի ինտրիգներ լարելու մէջ։

Դրութիւնը այս բոպէիս հետեւեալն է. ամերիկական կարդինալ Գիբօնս, որ Հռոմ է եկել, դարձաւ մի խմբի թիկնածու, որը մի անիրագործելի միտք է փայփայում, այն է ամերիկացի պապ տեսնել Հռոմի գահի վրա։ Այդ գաղափարը անիրագործելի է, որովհետև մեծամասնութիւնը ցանկանում է իտալացի պապ ունենալ։

Աւստրիայում գտնվող կարդինալը Հռոմ չի գայ։ Շատ են խօսում ֆրանսիական դեսպանի մասին, որը յունիսի 25-ին հինգ անգամ այցելեց Վատիկանը։ Աւստրիական դեսպանը բըգացաւ ունի, այդ պատճառով գոնէ ժամանակաւորապէս կը թուլանայ Աւստրիայի ազդեցութիւնը։ Ցանկարծ թեկնածուների մի քանի նոր անուններ հրապարակ եկան, և ձայների բաժանումն առաջացրին։ Այդ հանգամանքը շատ աչքի ընկնող նշան է, որ ցոյց է տալիս, թէ կօնկլավը շատ երկար կը տևէ։—«Tribuna» լրագիրը կտրականապէս հերքում է մամուլի մէջ սպրդած այն լուրը, որ իբր թէ մինիստրներ նախագահ Ցանարդէլլի և մինիստրութեան միւս անդամները խորհրդակցում էին այն միջոցների մասին, որոնցով կարելի կը լինէր որ և է կերպ սահմանափակել պապի օրէնքով երաշխաւորված իրաւունքները։

Մինիստրների խորհուրդը քննեց թագաւորի Պարիզ գնալը յետաձգելու հարցը պապի հիւանդութեան պատճառով։ Հաղորդում են, որ թագաւորի ուղեւորութիւնը մատդրութիւն կայ յետաձգել մինչև յուլիսի վերջը։

Ի նկատի ունենալով պապի անյուսալի դրութիւնը, կարդինալներն արդէն սկսեցին պատրաստութիւններ տեսնել կօնկլավի համար, ուր պէտք է ընտրվի Լեոն XIII-ի յաջորդը։

Լրագիրների խօսքով, անցեալ կիրակի կարդինալ Օրէլեա, որը իր անձի մէջ միացնում է սենեկապետի և եպիսկոպոսների միաբանութեան աւագագոյնի կոչումը, և որը պարտաւոր է կառավարել եկեղեցին պապի մահից յետոյ մինչև նրա յաջորդի ընտրութիւնը, երկու ժամ խօսակցութիւն ունեցաւ Լեոն XIII-ի հետ, և պապը հաղորդեց նրան իր ցանկութիւնները ապագայ կօնկլավի վերաբերմամբ։ Ասում են, պապը յոյժ յայտնեց, որ կօնկլավը չի մոռանայ այն անարդարութիւնը, որ ցոյց տրվեց սուրբ գահին 1870 թ-ին, և կընտրէ մի մարդու, որը հաստատամտութեամբ և համարձակ կը պաշտպանէ եկեղեցու իրաւունքները, նրա ազատութիւնը և անկախութիւնը։ Բացի դրանից Լեոն XIII համոզում էր կարդինալին ամեն միջոցներ ձեռք առնել, որպէս զի կօնկլավը զերծ մնայ բոլոր արտաքին ազդեցութիւններից։ «Italie» լրագրի տեղեկութիւնների համեմատ, պապը նոյնպէս հասկացնել տուեց, որ կը ցանկանար իր յաջորդ տեսնել կարդինալ Գոտտիին։

Պապի հետ խօսակցութիւնից յետոյ, Օրէլիա խորհրդակցութիւն ունեցաւ Բամպոլլա և Մակկի-դի-Զէլլերէ կարդինալների հետ, որոնց հետ միասին նա կը կառավարէ եկեղեցին պապի մահից յետոյ։ Նա հաղորդեց նրանց Լեոն XIII-ի յայտնած ցանկութիւնները։ Կարդինալները չտապեցին հեռագրել արտասահման ուրիշ կարդինալներին, հրաւիրելով նրանց Հռոմ։

«Fracassa» լրագրի խօսքով, դրանից յետոյ կարդինալ Գոտտիի մօտ կայացաւ 11 կարդինալների ժողով այն հարցերը քննելու համար, որոնք կապ ունեն նոր պապի ընտրութեան հետ։ Պապական գահի թիկնածուների թւում մնում են Վանուտէլլի, Գոտտի, Բամպոլլա և Կապէչէլատրո կարդինալները։ Ամենից շատ ձայն ստացան Գոտտի և Բամպոլլա։ «Fracassa» ապա հաղորդում է, որ եթէ Օրէլեան ընտրվի պապ, նա կընդունէ Պիոս X-ի անունը, որովհետև նա կարդինալի ատիճան ստացաւ Պիոս IX-ից. եթէ կընտրվի այն կարդինալներից մէկը, որը այդ կոչումը ստացել է Լեոն XIII-ից, այն ժամանակ նոր պապը կը կրէ Լեոն XIV-դ անունը։ Վճռված է, որ կօնկլավը կը կայանայ Հռոմում, և Վատիկանի ճարտարապետները արդէն սկսել են նրա համար բնակարաններ պատրաստել։ Պապը կոակեց իր գոյքի վերջին կէսը իր բաւական բազմաթիւ ազգականներին։ Առաջին կէսը նրանք առաջուց են ստացել։ Բացի դրանից Լեոն XIII-դ կարգադրեց, որ իր, որպէս պապի, արած բազմաթիւին խնայողութիւնները մշտապէս անձեռնմխելի գաղտնի ֆոնդ մնան և յանձնվեն իր յաջորդներին։ Նրանք պէտք է տոկոսները միայն գործադրեն յօգուտ եկեղեցու։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Արտասահմանեան մամուլի մէջ լուրեր էին տարածված, թէ աւստրօ-ունգարական արտաքին գործերի մինիստր Գոլուխօվսկի շուտով հրաժարական կը տայ իր պաշտօնից, որից յետոյ աւստրօ-ունգարական կառավարութեան յարաբերութիւնները Սերբիայի հետ կը բարւոքվի։ Այս առիթով «Српски Пиемонт» լրագիրը գրում է. «Թէ կոմս Գոլուխօվսկի կարող է հեռանալ իր պաշտօնից—դրա մէջ մենք ոչ մի արտաքոյ կարգի բան չենք տեսնում, բայց թէ Աւստրօ-Ունգարիան կարող է փոխել իր աւանդական քաղաքականութիւնը Սերբիայի վերաբերմամբ՝ այդ երևոյթին մենք ոչ միայն կասկածով ենք վերաբերվում, այլ և ուղղակի չենք հաւատում։ Աւստրօ-Ունգարիայի վերաբերմունքը դէպի Սերբիան ոչ միայն չեն կարող աւելի բարեկամական բնաւորութիւն ստանալ, այլ նա չէ կարող նոյն իսկ մարդավայել լինել։ Ուղիղ է, Աւստրիան կարող է արտաքուստ կեղծաւոր լինել, կարող է կեղծ բարեկամութիւն ցոյց տալ Սերբիային, բայց դա լոկ խաբեբայութիւն, լոկ դիմակ կը լինի, վարագուրելու գաղտնի դաւերը Սերբիայի դէմ։ Վիէննայում շատ լաւ հասկանում են, որ այն օրը, երբ Աւստրիան բարեկամական ձեռք մեկնէ Սերբիային և սերբականութեան, աւստրօ-ունգարական պետութիւնը այլ ևս գոյութիւն չի ունենայ։ Ով լաւ ծանօթ է այն ազգութիւնների կօնգլոմերատի հետ, որոնցից կազմված է այդ պետութիւնը, և Վիէննայի քաղաքականութեան սիստեմի հետ, նա երբէք մոլորութիւնների մէջ չի ընկնի և չի հաւատայ, որ Աւստրօ-Ունգարիան կարող է երբեիցէ բարեկամ դառնալ Սերբիային։ Վիէննայում լաւ գիտեն, որ աւստրօ-ունգարական պետութեան երկիրների մի նշանաւոր քանակութեան վրա բնակվում են սերբեր, որոնք անհամբեր սպասում են իրանց քաղաքական ազատութեան և միացման սերբական թագաւորութեան հետ... Ինչ բարեկամութիւն կարող է սպասել Աւստրօ-Ունգարիան Սերբիայից, քանի նա դիտէ, որ սերբերը անտարբերութեամբ չեն կարող նայել այն հալածանքների և ճնշումների վրա, որոնց ենթարկվում են նրանց ցեղակիցները Աւստրիայում։ Սերբիայի մահը կեանք է Աւստրիայի համար և ընդհակառակը Աւստրիայի մահը կեանք է Սերբիայի համար։

—Թիւրքական լրագիրները հաղորդում են,

որ Թիւրքիան որոշել է չինել տալ ութ զրահակիրներ՝ նորագոյն կատարելագործութիւններով։ Օրէցօր սպասում են սուլթանական իրադէի, որով հարկաւոր գումարներ նշանակվեն զրահակիրների չինութեան համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

1 յուլիսի

ՐԵՒԱՂԱՆ։ Զարայսկի գաւառի Լօլցի գիւղում այրվեցին 300 տուն, եկեղեցին, պօստային բաժանմունքը, չինական դատարանը և գինեխանութը։ Եղել են մարդկային զոհեր։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Բոլգարական նաւատորմի հրամանատարը մօտենալով մի հեռ միասին ընդունեց այն նաւը, որ պատուիրված էր Նիկոլաեվի նաւաշինարարական գործարանին՝ բոլգարական իշխանի համար։ Սա առաջին դէպքն է, որ Ռուսաստանում նաւ է չինվում օտար պետութեան պատուէրով։

ՀՌՕՄ։ Պապի ոյժերի թուլանալը շարունակվում է։ Դրութիւնը լուրջ է. անմիջական վտանգ չը կայ։

ԼՕՆԴՕՆ։ Հանդիսաների ժողով. Հնդկաստանի գործերի քարտուղար լորդ Համիլտոնը հաղորդեց, որ կառավարութիւնը նախապատրաստական միջոցներ է ձեռք առել ուղարկելու բրիտանական գործակատարներ, որոնք պէտք է պատահեն Դալայ Լամայի լիազօրների հետ, որպէս զի քննեն Հնդկաստանի և Տիբետի սահմանները որոշելու և երկու երկիրների վաճառականութիւնը զարգացնելու հարցերը։

ԲԵՐԼԻՆ։ Սուլթանական իրադէով Ստրումիցայի բոլգարական միտրոպոլիտ Գերասիմը ազատված է ոստիկանութեան հսկողութիւնից և նորից ճանաչված իր հոգևորական աստիճանով։

ՍՕՖԻԱ։ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնները չափազանց հանգստացուցիչ են։ Բ. Դուռն իսկապէս հրամայեց Մակեդոնիայի գեներալ նահանգապետներին ամեն ջանք գործ դնել գործերի դրութիւնը բարելաւելու և ազգաբնակութեան կեանքն ու գոյքն ապահովելու համար։ Բոլգարական կառավարութիւնն էլ իր կողմից ոչ միայն դադարեցրեց զինուորական պատրաստութիւնները, այլ և արգելում է ամեն մի գործողութիւն ապատամբների կողմից։

Կ. ՊՕԼԻՍ. Ռուսական և աւստրօ-ունգարական դեսպանութիւնները Բ. Դռան ուշադրութիւնը դարձրին Ուսկիւբի վիլայէթի արևելեան լաւաների առանձին զինուորականների, քաղաքացիական աստիճանաւորների և մի քանի մահմեդականների կատարած անկարգութիւնների վրա։ Քիչ ժամանակ առաջ այդ գաւառներն այցելել էին ռուսական և աւստրօ-ունգարական հիւպատոսները և պահանջել էին համապատասխան պատիժ յանցաւորների համար։ Բ. Դուռը ուղարկեց այդ տեղերը քննիչ մասնագիտով զինուորական և դատաստանական պաշտօնեաներից։ Գլխաւոր վերատեսուչ Հիլմի փաշան անձամբ շրջագայեց Կումանովի, Իշտիպ, Կրատովօ, Կոչանի, Պալանկու և Մալէչ հարթավայրի նահանգը։

ՀՌՕՄ։ Գիշերը մի քանի անգամ պապի սիրտը յետ եկաւ. ժամանակ առ ժամանակ նա կորցնում էր գիտակցութիւնը։ Լաւանալու այլ ևս յոյս չը կայ։ Դրութիւնը չափազանց լուրջ է։

ԼՎՕՎ։ Արևմտեան Գալիցիայի բազմաթիւ տեղեր հեղեղված են։ Կրակովի շրջակայքում ամեն ինչ ջրի տակ է։

ԼՕՆԴՕՆ։ Ժանտախտը տարածվում է Չիլիի գրեթէ բոլոր նաւահանգիստներում։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանը հրամայեց բանալ բոլգարական եկեղեցիները։

ԲԷԼԳՐԱԴ։ Պետեր I թագաւորին ամենացնծագին ընդունելութիւն ցոյց տուին երէկ օֆիցէրները՝ ժողովարանում, ուր թագաւորը եկել էր օֆիցէրների կազմած երեկոյթին։

ԲԷԼԳՐԱԴ։ Պետեր թագաւորի ազգական նեռնադվիչը ուղևորվում է Պետերբուրգ, որպէս զի նախապատրաստութիւններ տեսնի թագաւորական պրինցների և պրինցեսաների վերադարձի համար դէպի Սերբիա։

2 յուլիսի

ԿՕՎՆՕ։ Ցունիսի 30-ին Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի ներկայութեամբ տեղի ունեցաւ 7-րորդ դրագունակի գնդի հարիւրամեայ յօբելեանի տօնը։

ՊԱՐԻԶ։ Ազգային տօնի առիթով Լօնշանեան դաշտում տեղի ունեցաւ զօրահանդէս։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Պրինց Ցինը Լեսսարի հետ տեսնվելուց յետոյ չընդունեց եապօնական և անգլիական հաւատարմատարներին, պատճառ բերելով հիւանդութիւնը։

«Новый Край»-ը հաստատում է Արևելքում նախագծած նոր երկաթուղիների անհնարաւորութիւնը։

ՀՌՕՄ։ Բիւլլետէն երեկոյեան ժամը 8-ին. «Արեան զարկը թոյլ է. հիւանդ պապի ոյժերը թուլանում են կամաց-կամաց, բայց շարունակաբար»։

Կ. ՊՕԼԻՍ։ Էկզարխարանը նորից դիմումներ արեց Բ. Դրանը՝ բանտարկված քահանաների և եկեղեցական խմբապետների մասին։ Բ. Դուռը խոստացաւ շուտով ազատել նրանց և հավատաւորութիւն ցոյց տալ եկեղեցիներին ու դրպրոցներին և որոշ առաւելութիւններ տալ նահանգական վարչական գործերում, հէնց որ դադարեն կոմիտէների աւազակային գործողութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ»-ում տպագրած է Բարձրագոյն հրամաններ՝ եւրոպական Ռուսաստանի 46 նահանգներում ոստիկանական պահապաններ հաստատելու և արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ աւագներ նշանակելու մասին և Բարձրագոյն կարգադրութիւն, որով հրամայվում է գործը և նաւատորմը լրացնելու համար կանչել 1903 թ. 320,732 մարդ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Փոստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Փոստատար գնացքը դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Երևան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երևան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.)։

Փոստատար գնացքը Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երևանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՅՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մարթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱՐԱՆՈՎՍԿԱՅԱ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Դ. Ի. ՏԶԵՆԻՆՍԿԻ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԱՆՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՎՏԷՎԱ—5—6 ժ. վիրաբուժ. և մարթու հ. (էլեկտրաբուժ.)։

Լ. Վ. ԲԱՐՏՈԼԴ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ՐԱՖԵՆ ՇՇԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԱՆՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ—8—8½ ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի լիկոնալիտեմի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ԱՌՎԱՆԻՍՅԱՆ—տանը. ծոցկոնոտ և բժշկական մարմնամարզ. գիտել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Գրաքննչին յանձնված են և շուտով մամուլի տակ կը մտնեն հետեւեալ բանաստեղծական երկերը՝

«Ալի-Մէլիք և Սանասար» (արտատպած «Լուսայից»), «Պստիկ Մհեր» և Որբիկների արցունքները», իսկ «Սասունցի Դաւիթ» «Տարազում» հրատարակվելուց յետոյ նոյնպէս լոյս կը տեսնէ առանձին գրքով, երկու հատորը միասին, շուրջ 150 էջ։

1004 թուականից կը հրատարակվեն «Դիմակի տակ» (գրական երևոյթներից), «Իւրիյ Վեսելովսկի և Մ. Շահազիզ», «Հայոց բանաստեղծական դէմքեր», «Սասայ ծռերի յուշիկներ», «Բանաստեղծութիւններ» I և II հատոր, «Գրական գործիչներ» (պատկերներով)։

Մեր հասցէն՝ Շուլաւէր՝
Գրիգոր Բալասեան
1—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ սովորել է հաշուապահութիւն և ծառայել է հաշուեսենեակում, պատրաստ է հաշուապահի կամ գործակատարի պաշտօն ընդունել, թէ հիմնարկութիւնների և թէ մասնաւոր անձանց մօտ։ Հասցէն Արտիլլերիյսկայա փողոց № 18. հարցնել Մինասեանցին։ 3—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐ. ՆՈՒՆԷ ԳՕԼՕՇԵԱՆՑ

Ընդունում է հիւանդներին ժէլէզնովոդսկում։ Казенный нижній боракъ, № 10.
7—8

ԱՐՄԵԱՆԿԻ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Սպասաւոր - խմբապետ

(դպրոցական),

որը նաև ուսումնարանում կունենայ դասեր հայոց լեզուից, երգեցողութիւնից (շաբաթական 20 դաս)։ Ռոճիկ 450 րուբլի։

Դիմել՝ Армянскъ, Тавр. губ. ктитору Г. Мазлумянцъ.
2—6

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ՕՐ. Ս. ԾԵՐՄԱՋԱՆԵԱՆ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԻ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ
79—105

ԲԺԻՇԿ

Գ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

հաստատեալ ի Վիէննա, կառաջնորդէ հիւանդներին գալող հոկտեմբերին Թիֆլիսից արտասահման՝ օպէրացիաներ անելու համար։ Մանրամասն նամակով.

Dr. P. Afrikian. Wien. Langesgasse, 60.
5—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

Նախկին օրդինատոր «Ս. Պետերբուրգի Աչքաբուժական Հիւանդանոցի»

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ընդունում է աչքի հիւանդութիւն ունեցողներին ամենայն օր.

Առաւօտեան ժամի 9-ին մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Հասցէն. Վելիամինովսկայա փ. տ. № 8։
9—10

Լոյս տեսաւ
ՐԱՖՖԻ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

I և II մաս

Գինն է 1 ր. Շքեղակազմ 1 ր. 60 կ.

Վաճառվում է Բագու, «Գրամէթէոս» ընկ. գրավաճառանոցում։ Баку, Краснаводская у., д. Амирова.
2—3

ԵՒՊԱՏՕՐԻԱՅԻ ծխական դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

ՀՐՉՆԱՒԱՐԱ Ներսիսեան դպրոցի, 400 րուբլի ռոճիկ և սենեակ։ Ցանկացողները թող բարեհաճէն դիմել հետեւեալ հասցէով։

Евпаторія, ктитору П. Я. Сеферову.
19—25 Պօղոս Սէֆէրեան

Լոյս տեսաւ
Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԻԴԻԱԼԻՍՏ

ԵԹԼԷՔ

Կենսագրական - բանաստեղծական աշխատութիւններ, բաղկացած 448 մեծադիր երսոց ներից, ընտիր թղթի վրա, 91 ցինկոգրաֆ-աւոտիպ պատկերներով (չը հաշուելով զարդանկարները)։ Գինն է 3 րուբլի, մէկ փառահեղ կազմի մէջ՝ 4 ր., երկու կազմի մէջ՝ 5 ր.։ Ճանապարհածախս 60 կոպ.։ Առաջին հատորը այլ ևս չէ ծախվում։

Մամուլի տակ է նոյն հեղինակի

«ԹԱԳՆՎԱԾ ԿԱՅԾԵՐ»

դրամայ

11 լուսանկար-պատկերներով

Բաժանորդագրին է 1 րուբլի։ Թէ գրքերի և և թէ բաժանորդագրութեան համար դիմել հայ գրավաճառներին։ 6—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ

ամառս ընդունում է հիւանդներ Պետերբուրգում։

Армянская ул.' д. Паджановой.
(չ. ո. չ.) 6—20

Ամառվայ ընթացքում

«ՄՇՈՒՐՃ»

ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԲԱՅԷ

Երեքշաբթի և ուրբաթ օրերը առ. ժ. 11-ից—3, միւս օրերը, բացի կիրակի և տօն օրերից, ժ. 1-ից—3. 5—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

„ԹՐԹՂ“

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼԲՕՄԻ

Ա. պրակը

Հայրենի յիշատակների 10 ընտիր ֆոտոտիպ նկարներով (18×24 մեծութեամբ)։

Գինն է 1 ր. 50 կոպ. 10-ից աւելի գնողներին 20% զեղչ։

Դիմել՝ Թիֆլիս, Պուշկինսկայա Պատաժ
10—10 Ֆոտոտիպ Գնունի—Մարիմ

Թիֆլիսի Սիօնի եկեղեցու մօտիկ, Վիէնի բեռդում, Կօրխմազի Քարավանսարայի տեղում, նոր կառուցված է չորս յարկանի շինութիւն, որ ունի պաղվանքներ, ամբարներ և կօնտորներ բացելու տեղեր, նաև ճաշարան իր խոհանոցով, որ

ՏԱԼԻՍ ԵՆՔ ՎԱՐՁՈՎ,

թէ ամսով և թէ տարով։

Երրորդ և չորրորդ յարկերում բացված է

„ԱՐԱՔՍ“

հիւրանոց՝ կահաւորված սենեակներով։ Գները չատ մատչելի են։

Կառավարիչ՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐԵԱՆՑ
2—3

ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ

գրախանութում վաճառվում են ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Բեօրնսոն՝ կազմեց Ե. Թոփչեան 10 կ.
2) Մահմէդ՝ » » » 7 »
3) Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. 5 »
4) Սահակ Պարթև՝ » » » 5 »
5) Հաուպտման՝ » » » 15 »
6) Մեծն Ներսէս » » » 10 »

Շուտով լոյս են տեսնելու՝ 1) Ղևոնդ Երէց. 2) Զրադաշտ. 3) Վարդան Մամիկոնեան։

Պատրաստ է տպագրութեան համար՝ 1) Ընտրութիւն կաթնատուների՝ Գ. Մեծատուրեանի։ Պատրաստվում են նոր հրատարակութիւններ։

Դիմել՝ Книжный магазинъ „Гуттенбергъ“, (Дворцовая) Галустяну.
3—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Տնային վարժուհի

ԱՍԻԱԲԱԴ գնալու համար։ Պայմանների մասին դիմել «Գուտենբերգ» գրախանութը։
3—3

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Іюля 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т-ва, Б. Ванская ул.